**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3**
**/Протокол № 3/**
**Գնահատող հանձնաժողովի նիստի**
**/Заседания оценочной комиссии/**

## 1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագրի), աշխատանքների ձեռք բերման, նիստի անցկացման մասին

/Данные о заказчике, процедуре (коде), о приобретении услуг, о проведении заседания/

| | |
|---|---|
| **Պատվիրատու / Заказчик** | *<<ՀԱԷԿ>> ՓԲԸ / ЗАО «ААЭК»* |
| **Գտնվելու վայրը / Адрес** | *ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր / РА, Армавирский марз, г. Мецамор* |
| **Ընթացակարգի ծածկագիրը / Код процедуры** | *ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-9/24 / HAEK-BMAShDzB-9/24* |
| **Ձեռք բերվող աշխատանքի անվանումը / Наименование приобретаемой услуги** | *1Тр և 2Тр տրանսֆորմատորներից մինչև ՏԱ ՄՄ (МЗТЦ) "Ա" շարքի 6,3 կՎ ԿԲՍ-ի (КРУ) Р-1ТРА,Б և Р-2ТРА,Б-ը հոսանահաղորդիչների փոխարինում սարքավորումների մատակարարմամբ*<br>*Замена токопроводов от трансформаторов 1Тр и 2Тр до Р-1ТРА,Б и Р-2ТРА,Б КРУ 6,3 кВ по ряду «А» МЗТЦ с поставкой оборудования* |
| **Չափաբաժինների քանակը / Количество лотов** | *1* |
| **Նիստի անցկացման վայրը / Место проведения заседания** | *<<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական շենք / ЗАО «ААЭК», административный корпус* |
| **Նիստի անցկացման օրը և ժամը / Дата и время поведения заседания** | *14.05.2025թ. ժամը 15:00* |
| **Նիստի անցկացման նպատակը / Цель проведения заседания** | *Մասնակցության հայտերի գնահատում / оценка заявок на участие* |

## 2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի, մասնակիցների կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների մասին

**Данные о членах комиссии, участвующих в заседании**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ Председатель комиссии | ***Ա. Հովսեփյան / А. Овсепян*** | ***ԷԱ պետի փեղակալ / ЗНЭЦ*** |
| Հանձնաժողովի անդամներ Члены комиссии | ***Տ. Վելիկյան / Т. Великян*** | ***ԷԱ առաջատար ճարտարագետ / ВИ ЭЦ*** |
| | ***Գ. Ավետիսյան / Г. Аветисян*** | ***ԷԱ ավագ վարպետ / СМ ЭЦ*** |
| | ***Գ. Մարկոսյան / Г. Маркосян*** | ***ԳԲ առաջատար մասնագետ / ВС ОЗ*** |
| Քարտուղար / Секретарь | ***Հ. Ռամազյան / Р. Рамазян*** | *ԳԸԲ գլխավոր մասնագետ –խմբի ղեկավար / главный специалист – руководитель группы ОЗП* |
| Այլ տեղեկություններ | *Հանձնաժողովի անդամ Ա" Գրիգորյանը նիստին ներկա չէր* | |

## 3. Տվյալներ գնման անհրաժեշտության, գնման ձևի ընտրության հիմնավորման, ձեռք բերվող ծառայության նախահաշվային գնի վերաբերյալ

**Данные о необходимости закупки, обосновании выбора вида закупки, цене закупки (сметная цена)**

| | |
|---|---|
| Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը<br>**Обоснование необходимости закупки и выбора вида закупки** | *ՀՀ «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետ / п. 3 ч. 2 статьи 20 Закона РА «О закупках» «ՀԱԷԿ» ՓԲԸ 2025թ. Գնումների պլանի 3.9 կետ*<br>*п. 3.9 плана закупки ЗАО «ААЭК» на 2025г.* |
| Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)<br>**Председатель комиссии объявил заседание открытым и объявил цену закупки, выраженную одним числом (драм РА)** | *175,000,000.0* |

## 4. Տվյալներ մասնակիցների մասին

**Данные об участниках**

| | |
|---|---|
| Հայտ ներկայացրած մասնակիցների քանակը<br>**Число участников, представивших заявку** | *2* |
| Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, հասցեն, հեռախոսի համարը, էլ. փոստը<br>**Название, адрес, номер телефона, эл. почта организаций, представивших заявку** | **«Տրանզիտ» ՍՊԸ** / ООО «Транзит»<br>**ՌԴ ք. Մոսկվա, Ադմիրալ Ռուդնեվա փ.,տ.4** / РФ г. Москва, ул. Адмирала Руднева, д. 4<br>tranzitllc@mail.ru<br>Հեռ. +374-91-98-09-50 |

| | «Երվադա» ՍՊԸ / ООО «Ервада»<br>ՀՀ ք. Երևան, Արին բերդի 3-րդ նրբ. 10/3 / РА г. Ереван Арин берд пер.3, 10/3<br>Ervada-spy@mail.ru<br>Հեռ. +374-33-71-77-77 |
|---|---|

## 5. Գնման ընթացակարգի բողոքարկման և կայացված որոշման վերաբերյալ

## Об обжаловании процедуры закупки и вынесенного решения

*Գնման ընթացակարգի մասնակից «Երվադա» ՍՊԸ-ն Երևան քաղաքին առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է ներկայացվել հայց, որով հայցվորը պահանջել է.*

- *Անվավեր ճանաչել (վերացնել) «ՀԱԷԿ» կարիքների համար «1Тр և 2Тр տրանսֆորմատորներից մինչև ՏԱ ՄՍ (МЗТЦ) "Ա" շարքի 6,3 կՎ ԿԲՍ-ի (КРУ) Р-1ТРА,Б և Р-2ТРА,Б-ը հոսանքահաղորդիչների փոխարինում սարքավորումների մատակարարման նպատակով 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-9/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ «Տրանզիտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:*
- *Պարտավորեցնել թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-9/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Տրանզիտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:*

*Երևան քաղաքին առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը Գործ թիվ ԵԴ2/1294/02/25 շրջանակներում 17"04"2025 թվականի վճռել է"*

*«ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-9/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու, «Տրանզիտ» ՍՊԸ–ի հայտն անբավարար գնահատելուն և մերժելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի.*

*անվավեր ճանաչել «ՀԱԷԿ» կարիքների համար «1Тр և 2Тр տրանսֆորմատորներից մինչև ՏԱ ՄՍ (МЗТЦ) "Ա" շարքի 6,3 կՎ ԿԲՍ-ի (КРУ) Р-1ТРА,Б և Р-2ТРА,Б-ը հոսանքահաղորդիչների փոխարինում սարքավորումների մատակարարման նպատակով 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-9/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ «Տրանզիտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:*

*Հայցը՝ մնացած մասով, մերժել:*

*Ի կատարումն վերոգրյալ վճռով և վճռի 5-րդ գլխի (քննությամբ հաստատված փաստերը, դատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումները) հետևյալ եզրահանգմամբ"*

*«Ավելին, նման պայմաններում, երբ «Տրանզիտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը ճանաչվում է անվավեր, ապա գնահատող հանձնաժողովի համար ծագում է հայտը գնահատելու գործողությունը կրկին իրականացնելու պարտականություն, հետևաբար Դատարանը գտնում է, որ «Երվադա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «Տրանզիտ» ՍՊԸ–ի հայտն անբավարար գնահատելուն և մերժելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է մերժման:»*

*գնահատող հանձնաժողովը անվավեր է ճանաչում 2-րդ արձանագրությամբ «Տրանզիտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու որոշումները և վերադառնում է հայտերի գնահատման փուլ:*

*Участник процедуры закупки ООО «Ервада» обратился в Ереванский городской гражданский суд первой инстанции с иском, в котором истец потребовал:*

- *Признать недействительным (отменить) решения об удовлетворительной оценке заявки ООО «Транзит» и признании его отобранным участником оценочной комиссией процедуры закупки под кодом HAEK-BMAShDzB-9/24, объявленной решением № 1 от 20 декабря 2024 г. на поставку оборудования для замены силовых токопроводов с трансформаторов 1Тр и 2Тр на ТА МС (МЗТЦ) «А» серии 6,3 кВ КБС (КРУ) Р-1ТРА,Б и Р-2ТРА,Б для нужд «ААЭК».*
- *Обязать оценочную комиссию процедуры закупки под кодом HAEK-BMAShDzB-9/24 оценить заявку ООО «Транзит» как неудовлетворительную и отклонить ее.*

*Ереванский городской гражданский суд первой инстанции в рамках дела № ЕД2/1294/02/25 от 17 апреля 2025 года постановил:*

*Иск ООО «ЕРВАДА» к ЗАО «ААЭК» о признании решения оценочной комиссии процедуры закупки по коду HAEK-BMAShDzB-9/24 недействительным, требования об оценке заявки ООО «Транзит» как неудовлетворительной и ее отклонении, удовлетворен частично:*

*Признать недействительным решение об удовлетворительной оценке заявки ООО «Транзит» и признании его отобранным участником оценочной комиссией процедуры закупки под кодом HAEK-BMAShDzB-9/24, объявленной протоколом № 1 от 20 декабря 2024 г. на поставку оборудования для замены силовых токопроводов с трансформаторов 1Тр и 2Тр на ТА МС (МЗТЦ) «А» серии 6,3 кВ КБС (КРУ) Р-1ТРА,Б и Р-2ТРА,Б для нужд «ААЭК».*

*Остальная часть иска отклонена.*

*В соответствии с вышеуказанным решением и следующим выводом главы 5 решения (факты, установленные экспертизой, правовой анализ суда, мотивировка и выводы):*
*«Более того, при таких обстоятельствах, когда решение об оценке заявки ООО «Транзит» как удовлетворительной и признании его отобранным участником признано недействительным, оценочная комиссия обязана повторно оценить заявку. В связи с этим суд считает, что иск ООО «Ервада» к ЗАО «ААЭК» о требовании оценить заявку ООО «Транзит» как неудовлетворительную и отклонить ее подлежит отклонениюю»*
*Оценочная комиссия признает недействительными решения об оценке заявки ООО «Транзит» как удовлетворительной и признании ее отобранным участником 2-ым протоколом и возвращается к этапу оценки заявки.*

**Ընդունվեց որոշում՝ կողմ - 4, դեմ -0**
**Принято решение: за – 4, против – 0**

## 6. Տվյալներ ներկայացված հայտերի մասին

### Данные о представленных заявках

<table>
<tr><td rowspan="3">Տվյալներ հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին<br>Данные о наличии документов в заявке, требуемых приглашением</td><td>Մասնակցի անվանումը<br>Наименование участника</td><td>Գնահատվել է / оценка<br>(նշել բավարար կամ անբավարար) (удовлетворительно / неудовлетворительно)</td></tr>
<tr><td>«Տրանզիտ» ՍՊԸ / ООО «Транзит»</td><td>բավարար / удовлетворительно</td></tr>
<tr><td>«Երվադա» ՍՊԸ / ООО «Ервада»</td><td>բավարար / удовлетворительно</td></tr>
<tr><td colspan="3">Ընդունվեց որոշում՝ կողմ - 4, դեմ -0<br>Принято решение: за – 4, против - 0</td></tr>
<tr><td rowspan="3">Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին<br>Данные о соответствии составления представленных участником документов условиям, установленным приглашением</td><td>Մասնակցի անվանումը<br>Наименование участника</td><td>Գնահատվել է / оценка<br>(նշել բավարար կամ անբավարար) (удовлетворительно / неудовлетворительно)</td></tr>
<tr><td>«Տրանզիտ» ՍՊԸ / ООО «Транзит»</td><td>բավարար / удовлетворительно</td></tr>
<tr><td>«Երվադա» ՍՊԸ / ООО «Ервада»</td><td>բավարար / удовлетворительно</td></tr>
</table>

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ

- Էլեկտրոնային գնումների armeps համակարգ բեռնված «Տրանզիտ» ՍՊԸ-ի մասնակցության հայտում բացակայում է գնման ընթացակարգի հրավերի 2.7 և 2.8 կետերով սահմանված նախկինում կատարած համանման աշխատանքների պայմանագրի (պայմանագրերի) պատճենները և տվյալ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրություն և այլն):
- հայտերի բացումից հետո գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 41-րդ կետով 27.01.2025.թ «Տրանզիտ» ՍՊԸ-ին ծանուցել է առկա անհամապատասխանության վերաբերյալ և առաջարկել է շտկել առկա անհամապատասխանությունը:
- 27.01.2025թ. «Տրանզիտ» ՍՊԸ-ն որպես անհամապատասխանության շտկում գնահատող հանձնաժողովի դիտարկմանն է ներկայացրել «ՀԷՑ» ՓԲԸ և «Տրանզիտ» ՍՊԸ-ի միջև 19"03"2024թ" կնքված թիվ HAEK-BMAShDzB-4/23-02/03 պայմանագիրը և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող հանձնման-ընդունման ակտը:

Գնահատող հանձնաժողովը կրկին ուսումնասիրելով «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտը՝ ներառյալ «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված համանման պայմանագիրը և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը, որոնք գնահատվում են բավարար, և առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 42-րդ կետով արձանագրեց որ «Տրանզիտ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատվում է բավարար:

**Оценочная комиссия отметила, что**

**- В заявке на участие ООО «Транзит», загруженной в электронную систему закупок ARMEPS, отсутствуют копии договора(ов) на ранее выполненные аналогичные работы, указанные в пунктах 2.7 и 2.8 приглашения к участию в торгах, а также акты, подтверждающие исполнение данного договора в установленный срок (акты сдачи-приемки работ и т.п.).**

**- После вскрытия заявок оценочная комиссия, руководствуясь пунктом 41 Приложения 1 (Порядок организации процесса закупок) Постановления Правительства РА от 04.05.2017 № 526-Н, 27.01.2025 г. уведомила ООО «Транзит» о имеющемся несоответствии и предложила устранить имеющееся несоответствие.**

**- 27.01.2025 г. ООО «Транзит» представило на рассмотрение оценочной комиссии договор заключенной между ЗАО «ААЭК» и ООО «Транзит» от 19 марта 2024 г. и акт приема-передачи, подтверждающий надлежащее исполнение договора, в качестве исправлений зафиксированной несоответствии.**

**Оценочная комиссия, повторно рассмотрев заявку на участие ООО «Транзит», в том числе представленный ООО «Транзит» в качестве исправления аналогичный договор и документы, подтверждающие надлежащее исполнение договора, которым дала удовлетворительную оценку и руководствуясь пунктом 42 Приложения 1 (Порядок организации процесса закупок) Постановления Правительства РА от 04.05.2017 г. № 526-Н заявке на участие ООО «Транзит» дала удовлетворительную оценку.**

**Ընդունվեց որոշում՝ կողմ - 4, դեմ -0**
**Принято решение: за – 4, против - 0**

## 7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը
## Цена, предложенная каждым из участников

(ՀՀ դրամ) / (драмов РА)

| Հ/Հ | Ձեռք բերվող աշխատանքների անվանումը | | Գնման գինը Цена закупки | Մասնակիցների գնային առաջարկները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «Տրանզիտ» ՍՊԸ / ООО «Транзит» | | «Երվադա» ՍՊԸ / ООО «Ервада» | |
| | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1. | *1Тр և 2Тр տրանսֆորմատորներից մինչև ՏԱ ՄՍ (МЗТЦ) "Ա" շարքի 6,3 կՎ ԿԲՍ-ի (КРУ) Р-1ТРА,Б և Р-2ТРА,Б-ը հոսանահաղորդիչների փոխարինում սարքավորումների մատակարարմամբ* | *Замена токопроводов от трансформаторов 1Тр и 2Тр до Р-1ТРА,Б и Р-2ТРА,Б КРУ 6,3 кВ по ряду «А» МЗТЦ с поставкой оборудования* | *175,000,000.0* | *100,000,000.0* | *120,000,000.0* | *128,250,000.0* | *153,900,000.0* |

**8. Տվյալներ ընտրված մասնակցի և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ**
**Данные об отобранных участниках и участниках, занявших последующие места**

| Մասնակցի զբաղեցրած տեղը / Занявшее место участника | Մասնակցի տվյալները / Данные участника | Չափաբաժինները / Лоты |
|---|---|---|
| Ընտրված մանակից / Отобранный участник | *«Տրանզիտ» ՍՊԸ / ООО «Транзит»* | *1* |
| 2-րդ տեղ | *«Երվադա» ՍՊԸ / ООО «Ервада»* | *1* |

*Փաստաթղթերի գնահատման արդյունքում «Տրանզիտ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել կնքել «1Тр և 2Тр տրանսֆորմատորներից մինչև ՏԱ ՄՍ (МЗТЦ) "Ա" շարքի 6,3 կՎ ԿԲՍ-ի (КРУ) Р-1ТРА,Б և Р-2ТРА,Б-ը հոսանահաղորդիչների փոխարինում սարքավորումների մատակարարմամբ» աշխատանքների կատարման պայմանագիր: /*
*В результате оценки документаций признать «Տրանզիտ» ՍՊԸ / ООО «Транзит» отобранным участником и после окончания периода бездействия предложить заключить договора на выполнение работ по теме «Замена токопроводов от трансформаторов 1Тр и 2Тр до Р-1ТРА,Б и Р-2ТРА,Б КРУ 6,3 кВ по ряду «А» МЗТЦ с поставкой оборудования».*

**Ընդունվեց որոշում՝ կողմ -4, դեմ -0**
**Принято решение: за – 4, против - 0**

**Հանձնաժողովի նախագահ՝** **Председатель комиссии** ______ **Ա. Հովսեփյան / А. Овсепян**

**Հանձնաժողովի անդամներ՝** **Члены комиссии** ______ **Տ. Վելիկյան / Т. Великян**

______ **Գ. Ավետիսյան / Г. Аветисян**

______ **Գ. Մարկոսյան / Г. Маркосян**

**Համակարգող-քարտուղար՝** **Координирующий секретарь** ______ **Ռ. Ռամազյան/Р. Рамазян**